# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

| | | |
|---|---|---|
| 1. | Անունը, ազգանունը | Տիգրան Գաբրիելյան |
| 2. | Զբաղեցրած պաշտոնը | ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ |
| 3. | Գործուղման վայրը և ժամկետը | 2019 թվականի ապրիլի 23-25-ը<br>Տարտու (Էստոնիայի Հանրապետություն) |
| 4. | Հրավիրող կողմը | Էստոնիայի Հանրապետության գյուղական հարցերի նախարար Տարմո Տամմ |
| 5. | Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը | Մասնակցություն «Ագրոֆորում Մարե Բալտիկում» 7-րդ միջազգային համաժողովին |
| 6. | Քննարկված թեմաները | Այս տարի համաժողովի հիմնական թեման էր «Ագրոէկոլոգիան որպես կայուն պարենային համակարգերի խթան»: |
| 7. | Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը | **24 ապրիլ 2019**<br>1. **''Ագրոէկոլոգիան գյուղատնտեսության''** - Կլեյտոն Կամպանիոլա, ռազմավարական ծրագրի ղեկավար, FAO<br>2. **''Ագրո էկոլոգիա, կայուն գյուղատնտեսություն''** - Ֆրանկ Յիսուս, Բնական ռեսուրսների քաղաքականության բաժնի ղեկավար, OECD<br>3. **''Ագրոէկոլոգիան և գյուղատնտեսական քաղաքականությունը''** Պիեռ Բասկու, Եվրոպական Հանձնաժողովի Գյուղատնտեսության եւ Գյուղի զարգացման մեջ կայունության և եկամուտների աջակցության գծով տնօրեն<br>4. **''Գյուղատնտեսությանը եւ գյուղի զարգացման խնդիրները''** - Թենգիզ Կալանդաձե, Վրաստանի գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության, սննդի եւ գյուղական զարգացման վարչության պետ<br>5. **''Ագրոէկոլոգիան Լատվիայի օրինակով''** - Աիվարս Լապինս, Լատվիայի գյուղատնտեսության նախարարություն<br>6. **''Կաթի արտադրության ագրոէկոլոգիական սկզբունքները''** - Անդրիի Դյուկն (Ուկրաինայի կաթնամթերքի արտադրողների ասոցիացիա<br><br>**25 ապրիլ 2019** |

| | | |
|---|---|---|
| | | 1. **''Ագրոէկոլոգիայի դերը կլիմայի փոփոխության վրա''** - Եժի Կոզյրա (BIOECON)<br>2. **''Բալթիկ ծովի առողջությունը եւ նրա ազդեցությունը շրջապատի վրա''** Սուսաննա Կասինեն (HELCOM)<br>3. **''Պարենի կայուն արտադրություն''** Կալև Սիպպ Էստոնիայի կենսաբանական գիտությունների համալսարան)<br>4. **''Սպառողների ազդեցությունը սննդի արտադրության վրա''** Էիա Նուրք, Առողջության զարգացման ազգային ինստիտուտ<br>5. **''Էկոլոգիապես մաքուր մսի արտադրություն''** Կատրին Նորխով (Liivimaa Lihaveis, Nordic Meats)<br><br>**Հանդիպումներ**<br>**Իլլար Լեմետտիի**- «Գյուղական հարցերի նախարարության» կանցլեր<br>**Տանել Բուլիտկո**- «Էստոնիայի անասնաբույծների ասոցիացիայի» նախագահ |
| 8. | Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը | «Գյուղական հարցերի նախարարության» կանցլեր Իլլար Լեմետտիի և «Էստոնիայի անասնաբույծների ասոցիացիայի» նախագահ Տանել Բուլիտկոյի հետ հանդիպման ժամանակ ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում պետական օժանդակությամբ իրականացվող՝ «Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման» և «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրերը և պայմանավորվածություն ձեռք բերվել Հայաստանի Հանրապետությունում մսային ուղղության տավարաբուծության զարգացման համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունների վերաբերյալ:<br>Հանդիպման ընթացքում երկկողմ փաստաթղթեր չեն ստորագրվել: |
| 9. | Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները | Էստոնիայի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն մսային ուղղության խոշոր եղջերավոր տոհմային կենդանիների ներկրման համար նախադրյալների ստեղծում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը որպես տարանցիկ երկիր դիտարկելու հարցը, մասնավորապես դեպի Արաբական Միացյալ Էմիրություններ կենդանի կենդանիների տեղափոխումը:<br>Բացի այդ, առաջարկվեց Հայաստանի |

| | | |
|---|---|---|
| | | Հանրապետությունում գյուղատնտեսական տեղեկատվական հարթակի ստեղծման հարցում Էստոնիայի Հանրապետության համապատասխան փորձագետների հնարավոր մասնակցությունը:<br>Պատասխանատու՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն: |
| 10. | Գործուղվողները | ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյան<br>Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռոբերտ Մակարյան<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարության անասնաբուծության և անասնաբուժության վարչության անասնաբուժության բաժնի առաջատար մասնագետ Տաթևիկ Սարգսյան<br>«Ագրիֆուդ» ՍՊԸ-ի տնօրեն Սուրեն Մարգարյան |
| 11. | Ստորագրությունը, ամսաթիվը | [signature], 29/04/2019թ. |